ՀՈԳԵՒՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

ՆՈՐ ՄԱՐՏԱԿՐԱՎԵՐՆԵՐ*
ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԵՒ ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐԸ

«Դրա համար ասում եմ ձեզ. ամեն մեղք եւ հայհոյանք
կներվեն մարդկանց, բայց Հոգու դեմ հայհոյանքը չպիտի ներվի»:

Մատթ. ԺԲ. 31

Եհովայի վկաների աստվածաբանության համաձայն՝ Սուրբ Հոգին որպես անձ, անհատականություն գոյություն չունի: Ռասելական աստվածաբանությունը չկարողանալով «Սուրբ Հոգի»-անձը պատկերացնել որպես Աստված կամ որպես Երրորդության անձ՝ այն ընկալեց որպես անդեմ գործող ուժ, զորություն, մի բան, որին չի կարելի դիմավորել, անհատականացնել, այսինքն՝ անուն տալ: Այդ պատճառով էլ նրանք «Սուրբ Հոգի»-ն գրում են փոքրատառով՝ «սուրբ հոգի»[2], իսկ վերջին հրատարակություններում, «հոգի» բառից հանելով **h**-ն՝ գրում են՝ «սուրբ ոգի»: Ժամանակակից հայերենում «ոգի» բառը, որը հոմանիշ է «հոգի» բառին, մեծավ մասամբ կիրառվում է որպես առարկայական իմաստ արտահայտող բառ, որը եւ վկաները հարմարեցրել են իրենց դավանանքին՝ մոռանալով որ հայերենին հմուտները կարդալով «սուրբ հոգի» բառերը, այն կհասկանան որպես «Սուրբ Հոգի» եւ ամենեւին «սուրբ հոգի»-ն չի վերածվի իրենց ցանկացած «գործուն ուժի»:

Եկեղեցու պատմությանը, անշուշտ, ծանոթ են այս կարգի հերձվածներ, որոնք երեւան եկան նախանիկիական ժամանակներում. օրինակ՝ մոդալիստ միապետականությունը (մոնարխիականություն), սաբելականությունը:

Այդ պատմական հերձվածները Սուրբ Հոգու մասին ունեին ինքնուրույն աստվածաբանություն, որի առանցքն ի սկզբանե Ս. Երրորդության մերժումն էր: Նրանք հավատում էին Աստծու՝ Արարչի երեք տարբեր դրսեւորումների (modus), որոնք անկախ էին, եւ մեկը հաջորդում էր մյուսին: «Հայրը գործում է երբեմն իբրեւ Որդի եւ այդպես էլ կոչվում է, եւ ընդհակառակը. Որդին գործում է երբեմն իբրեւ Սուրբ Հոգի եւ այդպես էլ կոչվում է, եւ ընդհակառակը. Հոգին գործում է երբեմն իբրեւ Հայր եւ այդպես էլ կոչվում է, եւ ընդհակառակը»[3]: Այս առումով էլ մոդալիստ միապետականները կոչվում էին նաեւ «Հայրաչարչարներ», քանի որ այդպիսի դավանանքով խաչի վրա չարչարվողը Հայրն էր, քանի որ Որդին որպես անձ գոյություն չունի. նույն տրամաբանությամբ գոյություն չունի նաեւ «Սուրբ Հոգի»-ն:

Եհովայի վկաների պարագայում աստվածաբանական դրությունը այլ է. նրանք զրկում են Սուրբ Հոգուն դեմքից՝ վերագրելով նրան միայն անդեմ զորություն, միջնորդ գործող ուժ, որպես արտացոլումը Աստծու զորության եւ այն բոլոր սուրբգրային համարները, որոնք փաստում են Սուրբ Հոգու՝ Աստծուն համազո անձ լինելը, ուղղակի սիալ են

* Սկիզբը՝ «Էջմիածին», 2012, Ա.-Զ.:

2 Դրան հակառակ, սատանայի անունը միշտ գրում են մեծատառով՝ Սատանա:

3 **Ե. Տէր-Մինասեան,** Ընդհանուր եկեղեցական պատմութիւն, Ս. Էջմիածին, 1908, էջ 157:

թարգմանում, աղավաղում կամ էլ նենգափոխում են՝ մեկնաբանելով այնպես, որ այն դեմք չունենա:

Նրանց հիմնավորումներն են.

Սուրբ Հոգին չէր կարող անձ լինել, քանի որ Վերնատանը նա միաժամանակ նստեց 120 հոգու վրա:

«Մի դեպքում սուրբ հոգին երեւաց աղավնու տեսքով, մյուս դեպքում՝ բոցեղեն լեզուների, սակայն, ոչ մի անգամ չերեւաց անձի կերպարանքով»[4]: Իսկ «Հարկավո՞ր է հավատալ Երրորդությանը» գրքույկը հռչակում է հետեւյալ բանաձեւը.

«Սուրբ հոգին Աստծու գործուն ուժն է»:

Նույն գրքույկը բերում է մի քանի այլ վկայություններ եւս Ս. Գրքից եւ նույն տրամաբանությամբ եզրակացնում, որ Աստծու Հոգին չի կարող դեմք ունենալ եւ հետեւաբար անձ լինել, այլ՝ «որոշ չափով կարելի է այն նմանեցնել էլեկտրականության՝ ուժի, որը գործադրվում է տեսակ-տեսակ գործեր կատարելու համար»[5]:

Սուրբ Հոգու անձ լինելը մերժելու տրամաբանությունը շատ հատկանշական է Եհովայի վկաներին եւ նրանց տրամաբանական բոլոր սխեմաներին: Այսպես, համաձայն վկաների, չնայած Սուրբ Հոգին որոշ տեղերում հանդես է գալիս «դեմքի հատկանիշերով», բայց «նկատի առեք, որ երբեք սուրբ գրողները այս հոգին չեն պատկերացրել կամ ներկայացրել որպես առանձին անձ»[6] եւ եզրակացնում են.

«Ըստ Ա. Հովհ. 5:6-7 համարների, ոչ միայն հոգին, այլ նաեւ «ջուրը եւ արյունը» հանդես են գալիս որպես վկաներ: Սակայն պարզ է, որ ջուրը եւ արյունը անձեր չեն, այնպես էլ, ուրեմն, սուրբ հոգին անձ չէ»:

Այսպիսի տրամաբանությամբ Սուրբ Գիրքը մեկնաբանելը nonsense է: Սա այն դեպքն է, երբ ամեն փաստարկ, սուրբգրային ամեն համար չի քննարկվում կամ բովանդակային վերլուծության ենթարկվում, այլ ամենուր տեսնում են միայն այն, ինչ ուզում են տեսնել, անկախ նրանից, թե այնտեղ ինչ է գրված կամ ինչի մասին է: Այդ «տրամաբանական կառույցի» համաձայն, օրինակ, երբ Հիսուս հանդարտեցրեց փոթորիկը եւ հրամայեց ծովին՝ «Դադարի՛ր, լռի՛ր» (Մարկ. Դ. 39), կարելի է եզրակացնել, որ ծովն ու քամին անձնավորված են, դեմք ունեն, քանի որ Հիսուս նրանց դիմեց երկրորդ դեմքով: Հակառակն էլ չի կարելի պնդել. եթե Սուրբ Հոգին որեւէ հատվածում հանդես է գալիս անդեմ գոյականների հետ, ապա դա ամենեւին չի նշանակում, որ այդ գոյականների դեմքն էլ նույնը պիտի լինի:

Իսկ եթե ընթերցենք Ա. Կորնթ. Ա. 24 համարը՝ «...**Քրիստոսը Աստծու զորությունն** ու Աստծու իմաստությունն է», ապա կստացվի, որ այդ տրամաբանությամբ Քրիստոսն էլ անդեմ է, անձ չի կարող լինել - nonsense:

Ավելին, Բ. Կորնթ. Զ. 5-7 համարներում ներկայացնելով Աստծու պաշտոնյաներին՝ Պողոս առաքյալը գրում է. «...դուք ձեզ ներկայացրե՛ք իբրեւ Աստծու պաշտոնյաներ՝ ցույց տալով մեծ համբերություն նեղությունների մեջ, վշտերի մեջ, չարչարանքների մեջ, 5 հարվածների տակ, բանտերում, խռովությունների մեջ, տքնությունների մեջ, հսկումների մեջ, ծոմապահության մեջ, սրբությամբ, գիտությամբ, համբերությամբ, քաղցրությամբ, **Սուրբ Հոգով,** անկեղծ սիրով, ճշմարտության խոսքով, **Աստծու զորությամբ,** արդարության զենքով՝ հարձակվելու եւ պաշտպանվելու համար ...»:

---

4 «Հարկավո՞ր է հավատալ Երրորդությանը», «Դիտարան», 1995, էջ 21:

5 Անդ:

6 Անդ:

Այս շարքի մեջ տեսնում ենք «Սուրբ Հոգի»-ն եւ «Աստծու զորություն»-ը միասին՝ մի խմբի մեջ: Եթե դրանք նույն բաները լինեին, ապա դժվար թե Պողոս առաքյալը առանձնացներ դրանք:

Իսկ ինչ կստացվի, երբ նման սանդղակով դիտարկենք այն սուրբգրային համարները, ուր Աստված (=Հայրը) հավասարեցվում է ոչ դիմային գոյականների[7]: Օրինակ՝

Հովհ. Դ. 24 - Հոգի է Աստված, եւ նրա երկրպագուները պետք է **հոգով** եւ ճշմարտությամբ երկրպագեն:

Նույն համարը ՆԱԹ-ում այսպես է ներկայացված. «Աստված **ոգի** է, եւ նրան երկրպագողները պետք է **ոգով** եւ ճշմարտությամբ երկրպագեն նրան»:

ՆԱԹ-ի թարգմանությունից չի հասկացվում թե ո՞ւմ պետք է երկրպագեն. այդ «**նրան**»-ը ում է վերաբերում՝ «ոգո՞ւն», թե՞ «Աստծուն»: Վկաների դավանանքով ոգին անձ չէ, ուրեմն եւ Հայրը անձ լինել չի կարող, իսկ երկրպագողները ուղղակի պիտի «ոգով»՝ այսինքն ոգեւորությամբ երկրպագեն: Սա արդեն դարձյալ nonsense է: Այլ կերպ ասած նրանց դավանանքը անաստվածական արմատ ունի՝ կռապաշտություն է, քանի որ երկրպագում են զորությանը, գործուն ուժին: Գոնե նման եզրակացության չհանգելու համար կարելի էր **«նրան»** դերանունը այդ համարում գրել մեծատառով, որպեսզի երկրպագությունը վերաբերեր միայն Հորը:

Նման անհեթեթություններից խուսափելու համար պետք է ուղղակի ընդունել, որ Աստված Հոգի է[8], դրա համար էլ երկրպագողները Նրան պետք է երկրպագեն հոգով:

Եթե Սուրբ Հոգին «գործուն ուժ» է, ապա ինչ կստացվի սուրբգրային այն համարներից, երբ «Սուրբ Հոգին» փոխարինենք «գործուն ուժ»-ով:

Օրինակ՝ «Երբ նրանք Տիրոջ պաշտոնի մեջ էին եւ ծոմ էին պահում, **Սուրբ Հոգին** ասաց. «Առանձնացրեք ինձ Բառնաբասին եւ Սողոսին այն գործի համար, **որին ես կանչել եմ** նրանց»[9]:

ՆԱԹ-ը այս համարը թարգմանել է այսպես՝ «Երբ նրանք ծառայություն էին մատուցում, Եհովային, եւ ծոմապահություն էին անում, սուրբ ոգին ասաց. «Բոլոր մարդկանցից ինձ համար առանձնացրեք Բառնաբասին եւ Սողոսին այն գործի համար, որին նրանց կանչեցի »:

Դարձյալ նկատվում է թարգմանիչների միտումնավոր մոտեցումը. հունարենում չկա «Եհովա» բառը, այնտեղ «Տեր»-ն է օգտագործված: Իսկ թե ինչպես կարող է «գործուն ուժ»-ը խոսել, հրամայել՝ անհասկանալի է:

Նոր Կտակարանում «Սուրբ Հոգի» եզրի կիրառությունների մեջ գրեթե անհնար է վերացնել Նրա դեմքը: Ահա մի քանի համարներ, որոնք անառարկելիորեն ցույց են տալիս Սուրբ Հոգու Աստված լինելը, դիմավոր լինելը. Գործք Ե. 3-4, ԺԳ. 2, 4, Հովհ. ԺԴ. 16-17, 26, ԺԶ.7-14: Սակայն Եհովայի վկաներին դա հաջողվում է՝ զանազան անտրամաբանական կառույցներ ներկայացնելով, բնական է, ի սկզբանե ենթադրելով, որ իրենք ճիշտ են: «Աստվածաշունչը անձնական դերանուններ գործածելով, միայն հետեւում է քերականական կանոններին, ոչ թե ուսմունք է արտահայտում»[10]:

---

7 Հովհ. Դ. 24, Ա. Հովհ. Դ. 8:

8 Հոգին մեծատառով:

9 Գործք. ԺԳ. 2: Հունարենն է. **«λειτουργούντων δὲ αὐτῶν τῷ κυρίῳ καὶ νηστευόντων εἶπεν τὸ πνεῦμα τὸ ἅγιον Ἀφορίσατε δή μοι τὸν τε Βαρναβᾶν καὶ τὸν Σαῦλον εἰς τὸ ἔργον ὃ προσκέκλημαι αὐτούς »**:

10 «Հարկավո՞ր է հավատալ Երրորդությանը», էջ 22:

Բնական է, որ այդ դեպքում հարց կառաջանա, թե Աստվածաշունչը ե՞րբ է ուսմունք քարոզում ու ե՞րբ՝ քերականություն. ո՞վ պիտի որոշի այդ: Անշուշտ, Եհովայի վկաների համար դրա պատասխանը միանշանակ է՝ Բրուկլինյան կազմակերպությունը, «երկնային սրբերի ժողով» հանդիսացող օծյալները:

Վկաները պնդում են, որ Ծննդոց Ա. 2-ի՝ «Աստծու հոգին շրջում էր ջրերի վրա...» հատվածը կարելի թարգմանել նաև՝ «Աստծու գործուն ուժը շրջում էր ջրերի վրա» ձևով: Հիմնավորում են այսպես.

Եբրայերեն **רוּחַ** -հոգի բառը (ruah) թարգմանվում է որպես «գործուն ուժ», քանի որ այն եբրայերենում նշանակում է «քամի», չունի դեմքին բնորոշ հատկանիշեր[11]:

Եբրայերեն **רוּחַ** բառը (ruah) շատ իմաստներ ունի՝ քամի, շունչ, օդ, ուժ, հոգի եայլն: Բայց երբ այդ բառը կիրառվում է «Աստված» բառի հետ, այն միշտ ունեցել է դեմքին հատուկ հայտանիշներ, դիմավոր է եւ պետք է թարգմանել որպես ***Աստծու Հոգի, Սուրբ Հոգի***: Այս դեպքերում սխալ է այն թարգմանել անդեմ «գործուն ուժ»-ով: Դրանում համոզվելու համար շեշտենք, որ «Սուրբ Հոգի»-ն ունի դեմքին հատուկ հայտանիշեր. բանականություն, զգացմունք, կամք: Այս երեք հատկանիշները բնորոշ են միայն դիմավոր ձեւերին: Անդեմ ձեւերի մոտ բացառվում է բանականության, զգացմունքի, կամքի առկայությունը:

Ա. Սուրբ Հոգին ունի Բանականություն: Ա. Կորնթ. Բ. 10-ում կարդում են. «...Հոգին քննում է ամեն ինչ...»: Այստեղ օգտագործած **ἐρευνᾷ,** հունարեն բառը նշանակում է նաեւ հետազոտել. Մեր Տերն այդ նույն բառն է օգտագործում Հովհ. Ե. 39-ում, երբ հրեաներին ասում է «Քննեցեք գրքերը...»: Նա գիտի Աստծու խորունկ ծրագրերը, խորհուրդները, Աստծու մտքերը...[12]:

Բ. Սուրբ Հոգին ունի զգացմունքներ: Եփես. Դ. 30-ում կարդում ենք. «Եւ մի տրտմեցրեք Աստծու Սուրբ Հոգին ...»[13]: Պողոս առաքյալը Բ. Կորնթ. Բ. 2-5-ում մի քանի անգամ օգտագործում է **μὴ λυπεῖτε** բառը տրտմեցնել իմաստով՝ ուղղված կորնթացիներին: Այսինքն՝ միանգամայն հասկանալի է, որ անդեմ ուժին տրտմեցնելը nonsense է:

Գ. Սուրբ Հոգին ունի կամք: Ա. Կորնթ. ԺԲ. 11-ում Պողոս առաքյալը խոսում է Սուրբ Հոգու՝ որպես հոգեւոր շնորհների բաժանողի մասին. «Բայց այս ամենը միեւնույն Հոգին է առաջացնում եւ բաժանում է յուրաքանչյուրին՝ ինչպես որ կամենում է»[14]: Այստեղ օգտագործած **βούλεται** բառը, որ կամք է նշանակում, Հակոբոս առաքյալը օգտագործում է իր թղթում. «Նա իր կամքով ծնեց մեզ ...»[15]:

Սուրբ Հոգին սովորեցնում է (Հովհ. ԺԴ. 15), վկայում է Քրիստոսին (Հովհ. ԺՉ. 26), առաջնորդում է հավատացյալներին (Հռոմ. Ը. 14), ուղարկում է (Գործք. ԺԳ. 4), հրամայում է (Գործք. Ը. 29), բարեխոսում է (Հռոմ. Ը. 26), նրան չի կարելի հայհոյել (Մատթ. ԺԲ. 31), սրել (Գործք Ե. 5) ...

Նման գործողությունները վերագրել անդեմ ուժին սխալ է թե՛ բովանդակային առումով, թե՛ քերականական:

(Շարունակելի)

ՂԵՒՈՆԴ ՔԱՀԱՆԱ ՄԱՅԻԼՅԱՆ

---

11 **Рон Родес,** *Вразрез со священным писанием*, էջ 75:

12 Ա. Կորնթ. Բ. 10-11, Հռոմ. Ը. 27:

13 Հունարենն է՝ **καὶ μὴ λυπεῖτε τὸ πνεῦμα τὸ ἅγιον τοῦ θεοῦ:**

14 Հունարենն է՝ **πάντα δὲ ταῦτα ἐνεργεῖ τὸ ἓν καὶ τὸ αὐτὸ πνεῦμα διαιροῦν ἰδίᾳ ἑκάστῳ καθὼς βούλεται:**

15 Նա, այսինքն Հայրը, հունարենն է՝ **βουληθεὶς ἀπεκύησεν ἡμᾶς:**